

ՍԿՍՆԱԿ ԸՆԹԵՐՅՈՂԻ  
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ՅԵՂԻՆԵ ԶԱՐԵՆՑ

ՍԱՃԿԱԼ ՍԱՔՈՅԻ  
ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԸ

ԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ

891.99  
Գ-28

-6 NOV 2011

Ս Կ Ս Ն Ա Կ Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ի Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

891.99

Յ Ե Ղ Ի Շ Ե Զ Ա Ր Ե Ն Ց

9-28

uy

Մ Ա Ճ Կ Ա Ն Ս Ա Ք Ո Յ Ի Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

4077  
39700

2752

Հ Ս Խ Հ

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Յ Ե Ր Ե Վ Ա Ն 0 1 9 3 6



16 JUL 2013

48980

Պատ. խմբագիր՝ Ս Ի ր ա ս  
Տեխ. խմբ. Տ. Խ ա չ վ ա ն Բ յ ա ն  
Սրբազրիչ 4 Դ ո լ ու խ ա Յ յ ա ն



Քրավիտի լիազոր Կ. № 1094, Պատվեր 525  
Հրատարակ. 3685. Տիրաժ 5000  
Պետհրատի տպարան,  
Յերեվան, II Գնունի, 4



Հանձնված է արտ. 7 ապրիլի 1936 թ.  
Ստորագրված է ապելու 5 մայիսի, 1936 թ.

ԳԻՆԸ 30. ԿՈՊ.

ЕГИШЕ ЧАРЕНИЦ  
ИСТОРИЯ МАЧКАЛА САКО  
Гиз ССР Армени, Эривань, 1936 г.

### Յ Ե Ղ Ի Շ Ե Չ Ա Ր Ե Ն Ց

ՅԵ. Չարենցը ծնվել է 1897 թվին Կարսում: Սովորել է այնտեղի ուսուցիչական դպրոցում:

Չարենցը խորհրդահայ գրականության ամենախոշոր դեմքն է: Գրելն սկսել է 1912 թվականից: Նախահեղափոխական շրջանում նա գրել է մի շարք ուշադրարավ գործեր, բայց Չարենցի գրվածքները շունչ ու արյուն ստացան այն ժամանակ, յերբ նա մասնակցելով հեղափոխությանը, քաղաքացիական կռիվներին վողեւորվելով պրոլետարիատի ազատագրական պայքարով, յերգեց հեղափոխությունը: 1918 թվականին լույս տեսավ նրա «Մժբոխները խելագարված» պոեմը, վորն իր վրա հրավիրեց ընթերցող հասարակության ուշադրությունը: Այնուհետև նա գրեց «Յերեք ռադիկոպոետ» և «Սմենապոետ» աշխատությունները, վորոնք իրենց բուռն թափով համակում եյին ընթերցողին:

1920—23 թ.թ. Չարենցը գրել է «Յերկիր Նայիրի» նշանավոր վեպը, վորտեղ կծու հեղնությամբ մերկացրեց դաշնակցության հակահեղափոխական, հակաաշխատավորական եյությունը: Այդ վեպը, վոր թարգմանված է ռուսերեն, արդեն լույս է տեսել չորս հրատարակությամբ և մեծ ընդունելություն է գտել

ամբողջ Խորհրդային Միության մեջ: Յերբ Հայաստանի Խորհրդայնացման 15-ամյակի կապակցությամբ Հայաստանի աշխատախորությունը Մոսկվա գնաց, և ընդունվեց Կրեմլում, ընկ. Ստալինը հատկապես հեռաքրքրվեց, թե «Ինչպես ես ապրում գրող Չարենցը»:

Չարենցը Խորհրդային Հայաստանի ամենաճանաչված, ամենաչափ կարդացվող ու սիրված հեղինակն է: Նա գրում է բազմաթիվ ձևերով: Հենց այս «Մաճկալ Սաքոյի պատմությունը» պոեմը հատկապես նա գրել է գյուղացիների համար և մեր ակնակ ընթերցողը կարդալով այս գործը, պետք է ձգտի ծանոթանալ նուև նրա մյուս գործերին:

Չարենցի գործերն ամփոփված են նրա «Յերկեր» և «Գիրք ճանապարհի» աշխատությունների մեջ:

---

Քեզ համար եմ սխառմում, գեղջուկ,  
Խրատական զրիցը ես:

Ակա՛նջ արա, լա՛վ լսի դու,

Խելքի կտոր թե վոր ունես:

Ռանչպար, ուշով լսի հիմի,

Թե վոնց քո ես ախպեր Սաքոն

Աղի համար գնաց կոխիվ,

Կուռը կարած յեա յեկավ տուն—

Ու թե ընչե՛ր արավ Աաքոն

Ու վո՞նց հասավ իր ուզածին—

Ու թե ընչի՞ մաճկալ Սաքոն

Դեմ ե հիմի պատերազմին:

I

Մաճկալ Սաքոն իրանց գեղում

Իրա որում ապրում եր խեղճ:

Գեղի ծերին ուներ մի տուն,

Երկու թիզ հող վարելատեղ:

Եղ վարելու տեղն ել վոր կար—

Գեղից հեռու, քար ու քոլոտ:

Արտը հեռու, վարը դժար—  
Սչխատում եր տարին բոլոր:  
Ու աշունքին թե լավ ըլեր—  
Մի չոր հաց եր իրան մնում,  
Եղ չոր հացն ել թե վոր չլեր—  
Ուրիշի յեր մշակ գնում:  
Ինքը ջահել—յերխտասարդ,  
Տունը պառավ հեր ու նանի,  
Քրտինք թափում գիշեր ու զոր—  
Պահում եր տուն ու ընտանիք:

II

Ես որումն եր մաճկալ Սաքոն,  
Յերը գերմանու կռիվն ընկավ:  
Ի՞նչ իմանար մաճկալ Սաքոն—  
Ո՞վ է սարքում կռիվ ու դավ:  
Ի՞նչ իմանար Սաքոն ռանչպար,  
Թե ինչի՞ յեն կռիվ անում:  
Շա՞տ եր տեսել իրա որում  
Եղ նեմեցին կամ գերմանուն:  
Ինքը մենակ են իմացավ,  
Վոր գլխըրը եկավ մի որ,  
Թուղթ է եկել քաղքից, ասավ,  
Թե ջահելին տանեն գինվոր:

III

Ըլե՞լ է հեչ, վոր զենք առնի  
Ու հարուստը գնա կռիվ:  
Դե հայտնի յե սաղ աշխարքին,

Վոր խեղճին են տանում կռիվ:  
Եսպես եկան հափաքեցին  
Գեղի քյասիր-քյուսուր խալխին.  
Ռեսի տղին ձեռ չամլին—  
Միկուն վերի ծաղի՞կ եր խի...  
Բա գլխրանց թաղի Համբո՞ն,  
Բա Մելիքանց Սե՞թը մեկ ել...  
Դե ով ուներ ծանոթ ու փող—  
Սիպտակ բլեթ եր նրան եկել...

IV

Գեղի ծերին հերը կեցած՝  
ձանապարհ եր զնում տղին,  
Սրտին հազար կրակ ու ցավ,  
Սրտին հազար աղ ու լեղի:  
Ու Սաքոյի վզովն ընկած  
Մղկտում եր պառավ նանին  
Ու անիծում վիշապ ու չար  
Եղ նեմեցին ու գերմանին:  
Ի՞նչ իմանար նանը պառավ,  
Վոր մեղ չունի գերմանն եղտեղ,  
Վոր հարուստն է խեղդում իրան  
Ու են խալխին՝ իրա պես խեղճ:

V

Ի՞նչ իմանար պառավ նանին,  
Վոր թե՛ գերման, թե՛ հայ, թե՛ ռուս  
Ունեորն է իր թչնամին,

Ու հենց իրանց ուեսը տուող:  
Վոր դժանք են կոխիլ քցել,  
Խալխին հանել իրարու դեմ,  
Վոր իրարու արուն ծծեն—  
Իրանք վրեն նստեն—ուտեն:  
Վոր գերմանու խեղճն էլ հիմի  
Եղպես գրկած իրա նանին՝  
Կաց ե ըլում աղի-աղի,  
Վոր զրկում են իրան բանից:

VI

Մնաս բարով ասով Սաքոն  
Իրա պառավ ծնողներին:  
Մտիկ ավեց Վաչքի տակով  
Վերջին անգամ իրանց գեղին:  
Տեսավ՝ ենտեղ գեղամիջին  
Միկուն նստած կապուտ մի ձի,  
Ուրախ-ուրախ, թամքին խուրջին՝  
Արտն ե գնում հրեն հնձի...  
Ու յետևից տեսավ ուեսին  
Չուխեն հագին, տեսքը գոռոզ:  
Հրաման եր տալիս աղին,  
Հեան էլ ցնցում փորը տուող:

VII

Եսպես Սաքոն ախուր մի որ  
Կոխիլ գնաց գերմանու դեմ:  
Գեղում մնաց հերն հալիվոր,

Պառավ Կանին մնաց անտեր:  
Եստեղ հարուստ ուեսը եկավ,  
Բռնեց յախից Սաքոյի հոր՝  
Դու ել մի խեղճ մարդ ես, ասավ,  
Տղեդ սալդաթ, դու հալիվոր:  
Ղրկեմ, ասավ, մշակներին  
Արտդ հնձեն, բերեն քո տուն:  
Մշակներն էլ ենպես բերին,  
Վոր մի բուս եր արտը բիթուն:

VIII

Ես ժամանակ Սաքոն ֆոռնիթում  
Թոփ եր քցում խալխի վրա:  
Մեկ էլ, ըհը, դեմից մի թոփ  
Թռավ— եկավ, դիպավ նրան:  
Ընկավ Սաքոն յարնակալած  
Ու շուռ եկավ հողը գլխին,  
Ու թե շունչ կար փորում հալա—  
Են էլ փչեց, կտրավ լեղին:  
Ու չիմացավ Սաքոն էլ լան,  
Միայն վոնց վոր երազի մեջ՝  
Տեսավ նանին՝ վրեն չոքած:  
Կժով ջուր եր տալիս իրեն...

IX

Աչքը մեկ էլ բացեց Ասքոն—  
Պիտերում եր, լազարեթում,  
Կուռը կտրած, անտեր ու վորբ...

Եստեղ բերին, տվին մի թուզթ:  
Կարգաց Սաքոն ու իմացամվ՝  
Հերն եր նրամակ գրել գեղից,  
Միրտը կալեց արցունք ու ցավ  
Ու յետ՝ փորում կտրավ լեզին:  
Են եր գրում պառավ ապին,  
Թե վոնց ոեսը հունձքը կերավ  
Ու հետո յեւ, նոր գարունքին  
Նստավ իրանց հողի վրա:  
Ու թե պառավ նանին մեռավ,  
Ինքն եւ անտեր ու հալիվոր՝  
Մուրացկան ե գեղում իրանց,  
Թող փող ղրկի՝ ունի թե վոր...

X

Գիրը դրեց Սաքոն մի կողմ  
Ու լաց ելավ եստեղ մեկ ել:  
Ու միտք արավ մաճկալ Սաքոն,  
Թե ընչի՞ յե կռիվ եկել:  
Ո՞ւմ համար են հավաքում եղ  
Քյասիբավոր, բանվոր խալխին,  
Կռիվ քցում իրարու հետ,  
Արուն կապում սաղ աշխարքին:  
Ու թե ընչի՞ եղքան հանդին,  
Եղքան տուղ աղեք հազար  
Ենենց չելավ՝ Փոսնթ գային,  
Կռիվ տային հետ-հավասար:

XI

Ու միտքն եկան հազարավոր  
Են տղերքը իրանց պոլկի,  
Դիփը քյասիբ-աշխատավոր,  
Գործը թողած՝ եկած գորքի:  
Ո՞վ ե, ասավ, քչել դրանց  
Իրանց տնից, գործ ու կարգից,  
Եսպես տվել սրի բերան՝  
Հեռի մարդից ու աշխարքից:  
Ո՞վ ե դրանց տվել պատրոն,  
Բերեւ-քցել սար ու չուրբ—  
Հազար թոփի, պուլեմետրի,  
Հազար-հազար թվանքի կեր...

XII

Լազարեթում ընկած եսպես  
Միտք եր անում Սաքոն: Մի որ  
Եկան ասին թե՛ վո՞ղջ ըլես,  
Չկա եւ թագ ու թաղավոր:  
Ասին՝ ոսի հողի վրա  
Ազատութեն հիմի պտի...  
Լավ ե, ասավ Սաքոն իրան  
Ու դուրս գրվեց լազարեթից:  
Վոնց վոր մորութ թաղա ծնած  
Քուչա յելավ Սաքոն թիլ-թիլ.  
Քուչում բան չեր փոխվել հալա,  
Նայող չկար քյասիբ մարդին:

Թագավորը դուզ է, չկար,  
 Համա նրա տեղը թախտին  
 Նստել էյին թե յեներալ,  
 Թե ափիցեր-հարուստ մարդիկ:  
 Չեր վերջանում կռիվն ել յետ,  
 Ել յետ զորքին քչում ֆոռնթ,  
 Ել յետ ախպեր-պալդաթի հետ  
 Խոսում էյին շառ ու զոռով:  
 Յելավ Սաքոն, գնաց դիվան,  
 Թե ապրուստ տան, խարջ տան փորի  
 Ըսկի ռեխին նայող չեճավ  
 Ու ուշք դնող նրա որին:

Ման եր գալիս եսպես քաղցած  
 Սաքոն եղ մեծ քաղքի մեջին:  
 Ու մի որ ել ասին՝ հեռվանց  
 Մարդ է գալիս— «ընկեր Լենին»:  
 Ասին՝ ինչքան աշխատավոր,  
 Ինչքան բանվոր, ռանչպար փոր կա—  
 Եղ բոլորի մեծն է Լենին,  
 Եղ բոլորի նաաջնորդը:  
 Ինչ բանվոր կար եղ մեծ քաղքում—  
 Դիփը վակզալ գնաց, փոր են  
 Լենին ասած ընկեր մարդուն  
 Պատիվ բռնեն, դիմավորեն...

Յելավ ինքն ել գնաց վակզալ:  
 Առաջ անցավ սալդաթ Սաքոն:  
 Եղ սհաթին պոեզն եկավ,  
 Պոեզի մեջ քսան վագոն:  
 Ու դուրս եկավ ընկեր Լենին,  
 Բանվոր խալիսը տվավ ուռա:  
 Սաքոն խառնեց նրանց ձենին  
 Ըռանչպարի ձենը իրա:  
 Ու յերբ մի քիչ ձենը կտրավ—  
 Խոսեց Լենին ժողովրդին,  
 Ու յետ ենպես խոսքեր ասավ,  
 Վոր ջուր խմեց դիփի սրտից:

Մինչև հիմի առավ Լենին,  
 Աղի համար կռիվ արիք,  
 Հիմի վախտն է, փոր ձեր սվին  
 Շուռ տաք ել յետ՝ դեմ տաք աղին:  
 Ասավ՝ բուրժու՛ւյն է թչնամին  
 Կռիվ դրկած բանվոր խալիսի.  
 Նա՛ յե խմում արյունն հիմի  
 Ժողովրդի ու աշխարքի.  
 Ձեզ կռիվ է դրկել, ասավ,  
 Ձեզ պես հալալ բանվորի դեմ,  
 Վոր ձեր ձեռով տիրե աշխարհ,  
 Դուք կտորովեք— ինքը ուտե:



Ել վերջ, ասավ ընկեր Լենին,  
 Ես արեախում պատերազմին.  
 Պատերազմը ներսում պտի,  
 Վոր բուրժուայի հողին հանի:  
 Ի՞նչ ունենք մենք սալդաթի հետ—  
 Ըլի նեմցի, ըլի ոսի.  
 Ամեն սալդաթ հալա տգետ  
 Ու բուրժուայի ձեռին յետիր:  
 Մենք բարև ենք ղրկելու եդ  
 Գերման զորքին ու բանվորին,  
 Վոր վեր կենա բուրժուայի դեմ  
 Քցի նրան ու տրորի ...

## XVIII

Խաղաղութե՛ն Փոռնիժում, ասավ,  
 Կռի՛վ ներսի բռնավորին.  
 Հարըստի հետ անենք հեռաբ  
 Ու տա՛նք նրա տուուզ փորին:  
 Ու յերբ, ասավ, հեռաբ յարինք  
 Ու բուրժուայի մահը տեսանք—  
 Հողը կտանք ըռանչպարին,  
 Բանվորներին զավոդ ու հանք:  
 Ել վե՛ր, ասավ ընկեր Լենին,  
 Ու բուրժուայի հաշիվը տե՛ս,  
 Կռիվն ե ես, ասավ, վերջին—  
 Բանվոր խալխի կռիվը մեծ ...

Եսպես ասավ Լենինն իրանց:  
 Լոեց, Սաքոն ու հասկացավ:  
 Միտը եկավ նանը մեռած,  
 Հերն հալիվոր, կրակ ու ցավ:  
 Միտը բերեց Սաքոն մեկ ել  
 Ռեսանց հրեչ—բռնավորին.—  
 Ասավ՝ դնամ յետ գեղը մեր  
 Ու տամ խշտով նրա փորին:  
 Պոեզ նստավ եդ որ Սաքոն,  
 Եկավ—հասավ գեղը իրանց,  
 Մտիկ արավ աչքի տակով—  
 Քար չեր մնացել քարի վրա...  
 Վո՛չ հեր կար ել, վո՛չ մեր, վո՛չ տուն,  
 Հողն ել ռեսանց տղի ձեռին.  
 Եդ եր դատել մաճկալ Սաքոն  
 Ի փոխարեն կտրած կռի...

## XX

Գնաց Սաքոն աչքը յարուն  
 Ու ձեն տվավ ռեսանց ցեցին.  
 Մտածել եր ճանապարհին,  
 Վոր մի քացով նրան քցի:  
 Բայց դեմ յերավ եդտեղ նրան  
 Տոգած տղեն տանուտերի՝  
 Հնպարտ կեցած դռան վրա,  
 Ձեռը դրած մաուղերին...

Ռեսանց տղա Միկուն եր եղ,  
Վոր անուամբ նստել հանգիստ,  
Կերել, խմել—ու հիմի յել  
Դարձել եր ցեց—մաուղերիստ:

XXI

—Հը՞, մե՞ր տղա, արի մի դե՛ս,—  
Ասավ հպարտ տղեն ուսի.  
Քո սաղ կուրց փխխեցել չեմ—  
Պտի վախեմ հիմի կեսի՞ց...  
—Բա մեր հո՞ղը...ասավ Սաքոն.  
—Հո՞ղ,—քրթմնջաց ուսի տղեն.—  
Ընենց մի հող հիմի տամ քեզ,  
Վոր քեզ համար իսկաջ թխես...  
Քանի թեզ ե գնա՛, ասավ.  
Մտի՛կ արա, ասավ, ձեռի՛ս...  
Ու ձախ ձեռը բեխին տարավ,  
Աջը դրավ մաուղերին:

XXII

Թողեց Սաքոն գեղը իրենց,  
Փախավ դաշնակ մազգերիստից,  
Եկավ Գյումրի քաղաքը մեծ,  
Վոր եստեղից մաշին նստի—  
Գնա նորից Մոսկով քաղաք,  
Ուր որենք եր սավետական,  
Ուր ել չկար ուս ու աղա  
Վոչ ել դրանց նման մի բան:

Ուղեց Մոսկով գնա ելի,  
Անցնի ել յետ ճամփեն դժար,  
Տեսնի թե ի՞նչ կատի Լենին  
Հայաստանի խալխի համար...

XXIII

Գյումրի եկավ Սաքոն գեղից  
Ու Գյումրովա վակզալի քով  
Ընաստ եկավ մի լավ տղի,  
Հետը գրեց արձավ խելքով:  
Բանվոր եր եղ ծանոթ տղեն,  
Պարավոզ եր ուսմոնտ անում.  
Ճանաչում եր հայա դեղեն  
Մեր Սաքոյին, հորը, նանուն:  
Ձրեց արին սրտանց: Մեկ ել  
Ես բանվորը, թե՛ հա՛, շուտով  
Տի դաշնակի յախից բռնեն,  
Վոր սավետի ըլի հետո...

XXIV

Ու ցույց տվավ բանվոր տղեն  
Եղ դեպոյի դետը մի քիչ,  
Վոնց վոր վիշապ երկաթեղեն՝  
Բրաննվոյի պոեզը մեծ:  
Մե՛րն ե, ասավ, Սաքո՛ ախպեր,  
Ըստեղից ենք նշան տալու...  
Դու ել մնա, ասավ, մեզ հետ—

69253  
6001  
4017  
104



Եւ իդո՛ւր ես Մոսկով զնում . . .  
Մնաց Աաքոն: Մի շարաթ անց  
Բրանեւոյի վրից մին եւ  
Հարայ տվին, քչեցին ցած—  
Դե դաշնակն եւ հո չե՞ր քնել:

XXV

Կռի՛վ, կռի՛վ դաշնակներին,  
Ի շխանութե՛ն սամետական . . .  
Սաքոն ինքն եւ զնաց կռիվ,  
Չնայած վոր կուռը չկար:  
Մի քանի որ Գյումրի քաղքում,  
Բայագեթում, Ղարսա բերթում  
Կարմիր բայգաղ տեսավ Սաքոն,  
Սամեադական ի շխանություն . . .  
Բայց հալա տես, վոր ըռանչարար  
Խալխը՝ յեսիր ցեց դաշնակին՝  
Հասկանում չեր սամետական  
Ի շխանության կարգը կարգին:

XXVI

Սեպուն եկավ իրա գորքով,  
Մավզերիստներ բերավ հազար,  
Կռիվ եղավ եղտեղ հինգ որ,  
Հինգ որ եսպես տվին իրար:  
Կռիվ տվին մերոնք հինգ որ,  
Վերջը քաշվան Ղաղախու սար:

Եդ որվանից մաճկալ Սաքոն  
Բալչեիկ եր, կուսակցական:  
Ու բալչեիկ տղերանց հետ  
Գնաց Բագու ու մի տարի  
Չանցած՝ եկավ իրանց գեղ յետ,  
Վոր տա ռեսանց տղի փորին . .

XXVII

Եկավ—գեղը են չե՞ր հո եւ.—  
Աղքատ խալխը յելել վոտքի—  
Վոչ Միկիչ եր գեղում թողել,  
Վոչ դաշնակի մոութ ու քիթ:  
Հարուստներից ով մնացել—  
Մաճկալ Սաքոն հախից եկավ,  
Ու հաստատվեց եղ գեղում եւ  
Ի շխանութեն սամետական:  
Շինականը կախավ գործի  
Ու պատերազմ չկար եւ յետ—  
Վոչ ինզլիղի, վոչ եւ նեմցի  
Ու կամ թուրքի, վրացու հետ:

XXVIII

Հիմի Սաքոն իրանց գեղում  
Նախագահ է գեղխորհրդի:  
Վախտ—վախտ նստում գիր է գրում  
Ռանչպարական «Մաճկալ» թերթին:  
Ու թե գեղում խոսք է ըլում—

Պատերազմի-բանի մասին—  
Նա միշտ են ե զրից անուամ,  
Թե ի՞նչ ասավ ընկեր լենին:  
Ռանչպա՛ր, դու լա՛վ լսի նրան,  
Մտի՛կ արա կարած կռին,  
Ու թող ըլի ել քեզ խրատ  
Ես Սաքոյի զրիցը՝ հին:

XXIX

Մաճկալ Սաքոն ել քեզ խրատ,  
Ես զրիցն ել քեզ որինակ:  
Մենք շառ չունենք խալխի վրա,  
Վոչ ել կռիվ ու պատերազմ:  
Համա թե վոր եկան մեր դեմ  
Բուրժուայները, կովեն միթամ—  
Կարմիր Բանակ հիմի ունենք,  
Դրանց ուխին մի լավ կտանք:  
Մա՛հ թչնամուն հիմի հարուստ,  
Մեր տերության վրա թե գան—  
Բանվոր խալխին խաղաղ ապրուստ  
Ի շխանութեն սովետական...

1924



«Ազգային գրադարան»



NL0351746

412

48980

412 80 404